Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 13-րդ հոդվածներով, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Հ.Ներսիսյան 3/1 հասցեում գտնվող 146.4 հազ. դրամ սկզբնական արժեքով և 632.2 քառ. մետր ընդհանուր մակերեսով տարածքը և 0.2433 հեկտար մակերեսով հողատարածքը (անշարժ գույքի օգտագործման իրավունքի գրանցման 2016 թվականի մարտի 17-ի N 17032016-01-0020 վկայական) հետ վերցնել «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունից և անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին «Հերացի» ավագ դպրոցի ուսումնական գործունեությունը բնականոն կազմակերպելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1407-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման N 2 հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

11.	քաղ. Երևան, Հ. Ներսիսյան 3	դպրոց	1956	2012	2136.1	781957,2	160423,7	621533.5	07.10.2015 թ. N07102015-01-0141 (ՀՀ սեփականություն)	0.35269	բավարար	
		պարիսպ	1956	2012	37.8 (նաև 83.2 խ.մ)	113.4	26.5	86.9				

».

2) որոշման N 3 հավելվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«

10.	քաղ. Երևան, Հ.Ներսիսյան 3	դպրոց	1956	2012	2136.1	781957,2	160423,7	621533.5	07.10.2015 թ. N07102015-01-0141 (ՀՀ սեփականություն)	0.35269	բավարար	
		պարիսպ	1956	2012	37.8 (նաև 83.2 խ. մ)	113.4	26.5	86.9				
10.1.	քաղ. Երևան, Հ.Ներսիսյան 3/1	ճաշարան	1956	1956	632.2	23292.0	22516	776.0	17032016-01-0020	0.243	անմխիթար	

»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների ավարտից հետո երկամսյա ժամկետում լուծել «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ 2016 թվականի մարտի 12-ին կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման N 27/0016 պայմանագիրը՝ սահմանելով, որ համաձայնագրի նոտարական վավերացման և համաձայնագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ «Երևանի զարդարվեստի պետական արհեստագործական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո քառամսյա ժամկետում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հետ կնքել սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տարածքների անհատույց օգտագործման մասին պայմանագիր՝ սահմանելով, որ պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: